**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ**
**ԱՆԴԱՄ ՍԱՐԳԻՍ ՏԵՐ-ԵՍԱՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Տեր-Եսայան,

Ի պատասխան Ձեր 16.03.2026թ. հ. 57-2026թ. գրության՝ տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի պատասխանատվության ներքո:

Ավանեսովի փողոցի 2-րդ նրբանցքի հարակից տարածքում կոյուղատար համակարգի վերակառուցման նպատակով ընթանում է համատեղ քննարկում աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության, Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ՝ խնդրին սեղմ ժամկետներում լուծում տալու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ